ՏՈԼՍՏՈՅԻ ԼԵՆԻՆՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Զ. Հ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

1905 թ. հեղափոխությունից հետո, ռեակցիայի տարիներին, գաղափարական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները ոչ միայն չմեղմացրին, այլ առաջին պլան մղեցին գրականության ու արվեստի նշանակության, գրողի հասարակական դերի հարցերը։ Դրանց շուրջը ծավալված պայքարում դարձյալ անհրաժեշտություն առաջացավ պարզաբանել մարքսիստական գեղագիտության սկզբունքները, բոլշևիկյան կուսակցության հայացքներն ու մոտեցումը հակադրել ամեն տեսակի բուրժուական սահմանափակության ու կեղծիքի։

Այս հարցերի շուրջը կրքոտ վեճերի առիթ դարձան Լև Տոլստոյի ութսունամյա հոբելյանը՝ 1908 թ. և նրա մահը՝ 1910 թ.։ Բուրժուական թերթերում անասելի աղմուկ բարձրացվեց։ Թե՛ 1908 և թե՛ 1910 թ. մեծ գրողի հասցեին շռայլված անհամար գովեստները նրա ստեղծագործությունն արժեքավորելու բնույթ չունեին։ Բազմաթիվ մեծ ու փոքր հոդվածները դրվատում էին Տոլստոյին ոչ թե որպես մեծ գեղագետի, այլ որպես «կյանքի ուսուցչի», «մարգարեի», նոր կրոն ստեղծողի։ Անթիվ մանրամասնություններ կարելի է գտնել այդ հոդվածներում Տոլստոյի անձնական կյանքի և հարազատների, ընտանիքի, նրա հասարակական-մանկավարժական գործունեության մասին։ Եղան մարդիկ, որ քրքրեցին Տոլստոյի նախնիների դարերի խորքը գնացող հաջորդականությունը և փորձեցին հաստատել, որ մոր կողմից նրա նախնիների մեջ է Խան Մամայը[1]։ Բայց Տոլստոյի արվեստի նշանակությունը մարդկության գեղարվեստական զարգացման համար, նրա ստեղծագործության մերկացնող, մտրակող բնույթը մնացին ոչ միայն չբացահայտված, այլև գրեթե չշոշափված։

Բուրժուա-կադետական հայտնի «Речь» թերթը Տոլստոյին որակեց որպես «խղճի պոետ», «Յասնայա Պոլյանայի իմաստուն և քարոզիչ»։ Այնպիսի նշանավոր գրողներ և գրականագետներ, ինչպիսիք էին Դ. Մերեժկովսկին, Օվսյանիկո-Կուլիկովսկին, իրենց հոդվածներում խոսում էին ոչ թե Տոլստոյ-գեղարվեստագետի, այլ բացառապես նրա ուսմունքի մասին, որը պետք է միացներ ամբողջ աշխարհի մարդկությունը։ Օվսյանիկո-Կուլիկովսկին վերապահում էր անում. միլիոնավոր մարդիկ կարող են «խուլ մնալ» Տոլստոյի ուսմունքի հանդեպ, կարող են չբաժանել նրա համոզմունքները, բայց չեն կարող չլսել նրա ձայնն այն մասին, որ մարդիկ եղբայրներ են և «նրանց կյանքը

---

[1] *Տե՛ս* «Баку», *1910, դեկտ. 16-ի համարը (285),* «Толстой—потомок Хана Мамая» *հաղորդումը։*

պետք է հիմնվի Աստվածաշնչի սիրո սկզբունքների վրա»[2]։ Մերեժկովսկին հավատացնում էր, որ եթե տեղական ռուսական եկեղեցին լուության է մատնել Տոլստոյի մահը, դրա փոխարեն «ողբում է ամբողջ քրիստոնյա մարդկությունը, աշխարհի եկեղեցին։ Հանդստացրու, Տե՛ր, հանգուցյալի, քո ստրուկի հոգին։ Եվ կհասնի առ Աստված, կհասնի այս ողբը»[3]։

«Речь»-ի «ողբը» ավելի սենտիմենտալ ու գավառական ոճով կրկնում էին Անդրկովկասի զանազան թերթերը, այդ թվում հայկական «Մշակն» ու «Հորիզոնը», «Արարատ» ամսագիրը և ուրիշ պարբերականներ։ «Баку» թերթը Տոլստոյին հայտարարեց «հարություն առած խիղճ», «մարգարեի հոգով հանճար», «Մշակը»՝ Բուդդայի, Սոկրատի, Պլատոնի և առհասարակ «մարդկության ամենամեծ բարոյախոսների» շարքը դասվելու արժանի մտածող. «համամարդկային խղճի կենդանի արտացոլում», «նոր ուսմունքի հիմնադիր»։ Մինաս Բերբերյանը Տոլստոյի 80-ամյա հոբելյանի օրերին հանդես գալով «Արարատ» ամսագրում, այն միտքն էր պաշտպանում, որ Տոլստոյը մանավանդ իր վերջին շրջանի ստեղծագործություններում իր գեղարվեստական հանճարը ծառայեցրել է բացառապես իր ուսմունքը պրոպագանդելու գործին։ Նա կշտամբում էր մարդկությանը նրա համար, որ նրա «ականջները խուլ են», իսկ «սրտերը անապատ»՝ ըմբռնելու և յուրացնելու այդ «վեհ գաղափարը»։ Թվարկելով 1880—1900 թթ. այնպիսի նշանավոր երկեր, ինչպիսիք են «Իվան Իլյիչի մահը», «Խավարի իշխանությունը», «Քաղաքակրթության պտուղները», «Կրեյցերյան սոնատը», «Հարություն» վեպը, Բերբերյանը պնդում էր, թե Տոլստոյն այդ երկերով հանդես է եկել կրկին ու կրկին հիշեցնելու մարդկանց Մեծ վարդապետի հավիտենական խոսքերը՝ «Նոր պատվիրան եմ տալիս ձեզ. որ սիրեք միմյանց, ինչպես ես ձեզ սիրեցի, որպեսզի դուք էլ միմյանց սիրեք...»[4]։

Որքան էլ ճշմարտություն կար այն մտքի մեջ, որ 1880-ական թթ. սկսվում է Տոլստոյի կրոնական շրջանը, բայց գրողի այդ և հետագա տարիների, ինչպես և Բերբերյանի թվարկած երկերի մեջ առաջնակարգը, այնուամենայնիվ, քննադատությունն էր, էլ ավելի սուր, էլ ավելի անսքող մերկացումները, որոնցով գրողն արտահայտում էր Ռուսաստանի բազմամիլիոն գյուղացիության ատելությունը տիրող կարգերի հանդեպ։ Պլեխանովը իր «Պատկերացումների շփոթ» հոդվածում հաստատում էր, որ Տոլստոյի գործունեության այն շրջանում, որ կարելի է անվանել «կրոնական շրջան»,— ստեղծված երկերի «լավագույն էջերը նվիրված են բազմաթիվ ֆիզիկական և բարոյական չարիքների վերարտադրմանն ու մերկացմանը», չարիքներ, որոնք հանդիսանում էին սեփականատիրության ծնունդ, հիմնված էին մեկ հասարակական դասակարգի կողմից մյուսի շահագործման վրա[5]։

Տոլստոյի մահվան օրերին հայ թերթերը ևս (այդ թվում նաև գաղթօջախներում հրատարակվող թերթերը) գրեցին Տոլստոյի մասին։ Դրանցից գլխավորներն են՝ «Մշակ», «Փարոս», «Աշխատանք», «Հուվիտ», «Թատրոն և երաժշտություն», «Արօր», «Կոչնակ», «Ձայն Հայրենյաց», «Սուրհանդակ», «Աղբյուր», «Հայկունի», «Լույս», «Տարազ», «Բազմավեպ», «Տաճար»։

---

2 «Речь», 1910, СПб., № 108 (1546), 9/22 նոյեմբերի։

3 Նույն տեղում։

4 «Արարատ», 1908, էջմիածին, Թ, սեպտ., էջ 763։

5 Г. В. Плеханов, Искусство и литература, М., 1948, էջ 679։

Ո՞րն էր հայ մամուլում տպագրված հոդվածների հիմնական բովանդակությունը, շեշտը։ Քիչ բացառություններով բոլորն էլ աշխատում էին ընդգծել Տոլստոյի դերը որպես կրոնական՝ բարոյական նոր ուսմունքի, նոր աստվածության հիմնադրի, որպես նոր մարգարեի, որպես մի սուրբի, որին ամենքը դիմում են կյանքի և ապագայի նկատմամբ գեղատոմսեր ստանալու։ Նշվում էր նրա մեծությունը որպես գեղագետի, քննադատական դիտողություններ էին արվում Շեքսպիրի մասին Տոլստոյի հայացքների առթիվ, բողոք և զայրույթ էր արտահայտվում սինոդի «բանադրանքի» դեմ։ Բայց ընդհանուր առմամբ հայ մամուլը, իսկ և իսկ ռուսական լիբերալ-բուրժուական մամուլի նման, մեծարում էր Տոլստոյին և ողբում նրա մահը որպես «իր ցեղի ինքնատիպ ուսուցչի», «իր սերունդների օրինակելի դաստիարակի»։

Կովկասում Տոլստոյի ուսմունքի հակառակ կողմը տեսնելու և մեկնաբանելու առաջին փորձն արեց «Бакинский рабочий» թերթը, որի խմբագրական կազմում ակտիվ աշխատանք էին կատարում Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանն ու Ա. Ջավարիձեն։ Թերթը հատուկ հոդված տպագրեց Տոլստոյի ուսմունքի հետադիմական բովանդակության մասին։ Հոդվածի հեղինակն էր թերթի խմբագրական կոլեգիայի անդամ Ս. Վուլֆսոնը, որը սովորաբար իր հոդվածներն ստորագրում էր Ս. Նյուշին, իսկ այս դեպքում հանդես էր եկել «С. Н.—Шин» ստորագրությամբ։ Հոդվածագիրը չէր խոսում Տոլստոյի գեղարվեստական ստեղծագործության մասին և փորձ չէր անում գնահատել ու արժեքավորել Տոլստոյին, որպես գեղարվեստագետի։ Նա քննադատում էր Տոլստոյի ուսմունքը, կրոնը, աշխատում էր ցույց տալ դրանց վտանգավորությունը պրոլետարիատի հեղափոխական պայքարի համար, բուրժուազիայի և բանվոր դասակարգի շահերի անհաշտելիությունը։ Վերդասակարգային արվեստ չկա, ինչպես չկա վերդասակարգային գաղափար և քարոզ։ Մեծ գրողի հոբելյանի տոնակատարության ժամանակ բանվոր դասակարգը չի միանում բուրժուազիայի կողմից ցուցադրաբար ծավալված մեծարանքի հանդեսներին, քանի որ նրա ազատության, ինչպես և արվեստի ու կուլտուրայի ազատ զարգացման ճանապարհն անցնում է բուրժուազիային տապալելու համար մղվող պայքարի բարիկադների վրայով։ Երբ բանվոր դասակարգը կհաղթի, այն ժամանակ կլինի «կուլտուրայի», գեղարվեստական ստեղծագործության իսկական տոն և միայն այն ժամանակ պրոլետարիատը ոչ միայն մասնակցություն ցույց կտա այսպիսի տոնին, այլև կկանգնի բոլորի գլուխ»[7]։

Այս հոդվածը ոչ միայն քննադատելու, այլև ոչնչացնելու ակնհայտ դիտավորությամբ հատուկ առաջնորդող տպագրեց բուրժուա-կադետական «Бакинский листок»-ը։ Եվ որքան էլ տարօրինակ էր ու անժամանակ, այդ առաջնորդողը նախ հարձակվում էր Լենինի գրականության կուսակցականության մասին հոդվածի և այն թերթի վրա, որտեղ տպագրված էր այդ հոդվածը, ինչպես նաև Մաքսիմ Գորկու, որպես այդ թերթի և հոդվածի գաղափարակցի վրա։ Լենինի «Կուսակցական կազմակերպություն և կուսակցական գրականություն» հոդվածի հրապարակվելուց անցել էր երեք տարի, բայց Բաքվի կա-

---

6 Տե՛ս Ռուսեր Հովհաննիսյան, Լև Տոլստոյը և հայ գրական կյանքը, Երևան, 1964, էջ 75։

7 «Бакинский листок», Баку, 1908, № 7. (Ձևքի տակ չունենալով «Бакинский рабочий» թերթը, օգտվում ենք «Бакинский листок»-ի առաջնորդողի ընդարձակ մեջբերումներից— Զ. Ղ.)։

դետները չէին մոռացել «պարոնայք ինդիվիդուալիստների», «աղայական անարխիզմի» դեմ ուղղված լենինյան դիպուկ խոսքը։ Կովկասյան կադետների օրգանը, օբյեկտիվ քննադատի կեցվածք ընդունելով, Լենինին և նրա կողմնակիցներին համեմատում էր «Ռուսամի պատմության» գործող անձերից Օմարի հետ, որը «անհավատների մոտ» հայտնաբերված «Ալեքսանդրյան գրադարանը» հրամայում է այրել, որովհետև եթե գրադարանի թղթերում գրված է այն, ինչ կա Ղուրանում, ապա դրանք ավելորդ են, իսկ եթե գրված է այն, ինչ չկա Ղուրանում, ապա վնասակար են։ Թերթը, հասկանալով, որ Ս. Նյուշինի հոդվածը սերտ կապ ունի Լենինի «Կուսակցական կազմակերպություն և կուսակցական գրականություն» հոդվածի հետ, ՌՍԴԲ կուսակցության Կովկասյան միության օրգան «Кавказский рабочий листок»-ի բոլշևիկյան խումբն (որը հատված էր տպագրել Լենինի հիշյալ հոդվածից) անվանում էր «նոր ժամանակների ֆանատիկոսներ»։ Նրանք՝ «...հետևելով Մարքսի ու Էնգելսի գիտական սոցիալիզմի թեորիային, «Новая жизнь»-ի էջերում Ն. Լենինի գրչով գրել են հետևյալը. «ամեն մի իսկական սոցիալ-դեմոկրատ պետք է իր գրադարանում ունենա միայն սոցիալ-դեմոկրատական գրքեր, պետք է կարդա միայն սոցիալ-դեմոկրատական գրականություն և արհամարհի մնացած ամբողջը, բուրժուականը...»[8]։ Ընդ որում «Бакинский листок»-ը զգուշորեն աշխատում էր այնպես ցույց տալ, թե լենինյան մտքերը չեն բխում մարքսիզմից, նրա աղավաղման փորձեր են, որ «նոր ժամանակների ֆանատիկոսները» Ս. Նյուշինը և մյուսները, հետևում են մարքսիզմին ոչ թե իրականում, այլ «իբր թե»...

Լենինի հոդվածի և կովկասյան բոլշևիկյան թերթի մտքերի այսպիսի տգեղ աղավաղումները պարզունակ կրկնությունն էին էսեռական «Наша жизнь» թերթում տպագրված Դ. Ֆիլոսոֆովի «Իշխանության թույնը» հոդվածի, որի մեջ Լենինին վերագրվում էր այնպիսի տեսակետ, թե բոլոր գրողները պետք է մտնեն կուսակցական կազմակերպությունների մեջ։ Այդ դեպքում, ասում էր Ֆիլոսոֆովը, կուսակցությունից դուրս գտնվող ամբողջ գրականությունը «идет на смарку»։ «... պ. Լենինը պայքարում է նրա համար, որ գրականությունը չդառնա կարյերայի և շահառության միջոց։ Բայց մի՞թե նա չի նկատում, որ ոչինչ չի կարող այնպես զարգացնել կարյերիզմը, ինչպես միայն «կուսակցական գրողներին» գրող համարելը»[9]։

Կովկասյան բուրժուական թերթը կրկնում էր այս աղավաղումները, որպեսզի առիթն օգտագործելով բոլշևիկներին հայտարարեր «դոկտրինող գրամաֆոն», իսկ իրեն՝ համամարդկային գաղափարների պրոպագանդիստ։

Նույնքան տգետ և կեղծ էին մեղադրանքները Գորկու հասցեին։ «Бакинский листок»-ը այստեղ էլ կրկնում էր հայտնի լիբերալ հրապարակախոս Բերդյաևին, մեղադրելով Գորկուն այն բանում, որ իբր թե նա իր «Նոթեր քաղքենիության մասին» հոդվածաշարում Լև Տոլստոյին և Դոստոևսկուն համարում է «ամենասովորական քաղքեններ», ամբողջ եվրոպական և ռուսական միտքը՝ «համատարած և լիակատար քաղքենիություն»։ Վերջապես անցնելով Ս. Նյուշինի հոդվածին, թերթը նույն մերկապարանոց դատողություններով, որոնց մեջ աչքի է զարկում մարքսիզմի, դասակարգային պայքարի հասկա-

---

[8] «Бакинский листок», 1908, № 7.

[9] «Наша жизнь», 1905, № 349.

ցողությունների կատարյալ շփոթ, հոդվածագրին վերագրում էր նրա կողմից չարտահայտված մտքեր ու հայացքներ։ Թերթի ասելով Նյուշինը «նկատում է միայն բացասականը» և Տոլստոյին ներկայացնում է որպես «աշխատավոր ժողովրդին թշնամի», մի գրողի և մտածողի, որն իր «գեղարվեստական և քարոզչական գործունեությամբ ծառայել է միայն բուրժուազիայի շահերին և վնասակար է պրոլետարիատին»[10]։

«Бакинский листок»-ի այս առաջնորդողը զայրույթ առաջացրեց «Бакинский рабочий» բոլշևիկյան թերթի աշխատակիցների մեջ, ինչպես նաև բոլշևիկյան կուսակցական շրջաններում։ Նրա միտումնավոր հարցադրումներն ու պնդումները մերկացրեց և բոլշևիկների բողոքն արտահայտեց Սուրեն Սպանդարյանն իր հոդվածում, որը հենց այդպես էլ վերնագրված էր «Ազնիվ զայրույթ»։ «Ինչի՞ համար է այդ վայնասունը։ Ինչի՞ համար են Ն. Լենինի ասածներն անպատկառ կերպով աղավաղում և փոխ առած համեմատություններ կատարում գրամաֆոնի հետ»[11],— հարց էր տալիս Սպանդարյանը։ Նա «լիբերալ հոգիներ» էր անվանում այն հեղինակներին, որոնք «հասարակակոն նեխված սիստեմը պաշտպանելու համար» պատրաստ են ամեն տեսակ «ստորաքարշության»։ Սպանդարյանը բացատրում էր սոցիալ-դեմոկրատիայի դիրքը Տոլստոյի՝ որպես մտածողի և գեղագետի հանդեպ։ Հնարավոր է, որ այստեղ նրան օգնության հասած լիներ Լենինի «Լև Տոլստոյը որպես ռուսական հեղափոխության հայելի» հոդվածը։ Այդ հոդվածը լույս տեսավ բոլշևիկյան «Пролетарий» թերթի 1908 թ. սեպտեմբերի 11-ի (24-ի) համարում, Սպանդարյանի հոդվածից 16 օր առաջ։ Կենտրոնական կոմիտեի օրգան «Пролетарий» թերթը Բաքվի բոլշևիկների համար ուղեցույց օրգան էր և գուցե 16 օրվա ընթացքում ժնևից Բաքու հասնելով հնարավորություն էր տվել «Бакинский рабочий»-ի խմբագիրներին՝ հստակ կողմնորոշվելու Տոլստոյի հարցում, թեև միաժամանակ դժվար է պնդել այս ենթադրությունը. այն ժամանակվա պայմաններում 16 օրը քիչ էր նման անլեգալ փոխադրումների համար։ Սակայն մի բան պարզ է՝ լենինյան մտքերը ընդդեմ գրողի աշխարհայացքի և գեղարվեստական ստեղծագործության մեջ արտահայտած դաղափարների մեխանիկական նույնացման՝ ծանոթ էին Անդրկովկասի բոլշևիկներին։

Մինչև Լենինի հոդվածի հրապարակ գալը Լև Տոլստոյի մասին գրված ոչ մի ուսումնասիրության կամ հոդվածի մեջ մեծ գրողի ստեղծագործությունը չէր վերլուծվել որպես դարաշրջանի մեծագույն իրադարձությունները գեղարվեստորեն անդրադարձնող երևույթ։ Լենինը հեղաշրջում կատարեց Տոլստոյի ստեղծագործության մեկնաբանության, դրանով իսկ՝ տոլստոյագիտության մեջ։ Նշելով, որ «Ռուսական լեգալ մամուլը, որ լեփ լեցուն է Տոլստոյի 80-ամյա հոբելյանի առթիվ գրված հոդվածներով, նամակներով ու նոթերով, ամենից քիչ է հետաքրքրվում ռուսական հեղափոխության բնույթի և նրա շարժիչ ուժերի տեսակետից Տոլստոյի երկերի վերլուծությամբ»։ Լենինը ցույց էր տալիս, որ «Տոլստոյի հայացքների միակցությունը, վերցրած իրև ամբողջություն, արտահայտում է հենց մեր հեղափոխության առանձնահատկությունը-

10 «Бакинский листок», 1908, № 7

11 Սուրեն Սպանդարյան, Հոդվածներ գրականության, արվեստի, կուլտուրայի և կրթության մասին, Երևան, 1949, էջ 9։

ները իբրև բուրժուական գյուղացիական հեղափոխության»[12]։ Տոլստոյի մասին ստեղծված վիթխարի գրականության մեջ միայն Լենինի հոդվածներում հնչեց այն խոր ճշմարտությունը, որ մեծ գրողի ստեղծագործության նշանակությունը իր ժամանակաշրջանի էական կողմերի, բարդ հակասությունների ճշմարտացի արտացոլման մեջ է։ Լենինը կոնկրետ օրինակով խորացրեց ու լրացրեց Մարքսի նշանավոր միտքը, որ գեղարվեստական գրականությունը աշխարհի ճանաչման, իրականության ըմբռնման, յուրահատուկ միջոցներից մեկն է։ Հետաքրքիր է, որ Լենինի՝ Տոլստոյին նվիրված հոդվածներից մեկի («Լ. Ն. Տոլստոյ») Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտում պահվող օրինակի մեջ այդ հոդվածի վերնագիրը եղել է «Լ. Ն. Տոլստոյի նշանակությունը ռուսական հեղափոխության և ռուսական սոցիալիզմի պատմության մեջ»։

Բնորոշելով Տոլստոյի ստեղծագործությունը որպես ռուսական հեղափոխության հայելի, Լենինը ուղի նշեց մարքսիստական գեղագիտության մեջ մեթոդի և աշխարհայացքի պրոբլեմի խոր լուծման համար։ Գրողի ստեղծագործության մեջ արտահայտված գաղափարական հակասությունները արդյունք են նրա աշխարհայացքի մեջ եղած հակասությունների։ Տոլստոյը գեղագիտական հանճար և խղճալի քարոզիչ հակասությունը հետևանք է այն բանի, որ նրա հայացքների մեջ արտահայտվել է ռուս գյուղացու աշխարհայացքը։ Ռուս գյուղացին ատում էր կալվածատիրական-կապիտալիստական կարգերը, նրա ներսում բորբոքվում էր ճնշված, ծայրահեղ աղքատության դատապարտված աշխատավորի բուռն բողոքը։ Բայց նույն գյուղացին դարավոր ստրկությունից դուրս գալու, ատելի կարգերը փոխելու միջոց չգիտեր։ Սրանից էլ առաջանում էր մի կողմից անսքող, անկեղծ ու հիմնավոր ցասում. ամեն ինչ փոխելու ցանկություն, մյուս կողմից՝ անզորություն, այդ երազների իրականացման կատարյալ տհասություն, որը Տոլստոյի աշխարհայացքի և ստեղծագործության մեջ արտահայտվում էր մի կողմից որպես ամեն տեսակի դիմակների պատռում, տիրող կարգերի համարձակ, արմատական քննադատություն, մյուս կողմից՝ «կրոնախևություն», չարին չհակառակելու, ինքնակատարելագործմամբ մարդկանց ազնվացնելու թշվառ քարոզ։ «Տոլստոյը ծիծաղելի է որպես մարգարե, որը հայտնագործել է մարդկության փրկության նոր դեղատոմսեր, ուստի և բոլորովին ողորմելի են արտասահմանյան և ռուսական «տոլստոյականները», որոնք ցանկացան դոգմա դարձնել նրա ուսմունքի հենց ամենաթույլ կողմը։ Տոլստոյը մեծ է որպես այն գաղափարների և այն տրամադրությունների արտահայտիչ, որոնք կազմվել են միլիոնավոր ռուս գյուղացիության մեջ Ռուսաստանում բուրժուական հեղափոխություն սկսելու ժամանակ»[13]։ Այստեղից էլ Լենինը հետևություն էր անում. որպես գեղարվեստագետ, որպես բուրժուա-կալվածատիրական Ռուսաստանի արատները մերկացնող և խարազանող, որպես իր դարաշրջանը կարևոր կողմերով պատկերող Տոլստոյը հանդիսանում է առանձնահատուկ մեծություն նաև ռուս բանվորների համար։ Տոլստոյի ստեղծագործությունն, իր այդ հատկանիշների շնորհիվ, հնարավորություն է տալիս բանվորներին ավելի լավ ճանաչելու իրենց թշնամիներին։ Սակայն որպես կյանքի ուսուցիչ Տոլստոյը ոչ միայն ընդունելի չէ բանվոր դասակարգի և ռուս բազմամիլիոն աշխատավորության, հենց նույն

12 Վ. Ի. Լենին, Հոդվածներ Տոլստոյի մասին, Երևան, 1953, էջ 6։
13 Նույն տեղում։

գյուղացիության համար, այլև վնասակար է, որովհետև չարին չհակառակելու նրա քարոզը իր վերջնակետում նշանակում է հաշտություն ամեն տեսակի անիրավացիության ու տիրող կարգերի հետ, հրաժարումն ամեն տեսակի պայքարից, ինչպես նաև հեղափոխությունից։

Նույն սկզբունքով Սուրեն Սպանդարյանը իր «Աղնիվ զայրույթ» հոդվածում անջատում էր Տոլստոյ-գեղարվեստագետին Տոլստոյ-քարոզչից։ Պաշտպանելով Ս. Նյուշինի միտքը բանվոր դասակարգի համար Տոլստոյի աշխարհայացքի անընդունելի տարրերի մասին, նա գրում էր. «Մենք Տոլստոյին չենք գնահատել իբրև խոսքի արվեստագետի, իբրև մարդկային հոգին ճանաչողի։ Այս առթիվ երկու կարծիք չի կարող լինել։ Մենք նրան գնահատել ենք իբրև քարոզչի, իբրև «նոր կյանքի» ուսուցչի և գտել ենք, որ նրա ուսմունքը վնասակար է, ռեակցիոն, չի համապատասխանում պրոլետարիատի շահերին, ձեռնտու է բուրժուազիային»[14]։

Սպանդարյանը հիանալի պատասխան տվեց կադետական թերթի այն զրպարտությանը, թե Լենինը և նրա հետևորդները ժխտում են դասական գրականության նշանակությունը, հանձնում են այդ գանձը բուրժուազիային։ «Եթե ասենք, թե այսինչ գրողը, նկարիչը, փիլիսոփան հանդիսանում են տիրող դասակարգի իդեոլոգներ, մի՞թե այդ նշանակում է ժխտել այն նշանակությունը, որ ունեն նրանք համամարդկային առաջադիմության համար։ Հոմերոսի և նրա երկի նշանակությունն ամենևին չի նսեմանում այն հանգամանքից, որ անգամ պրոֆ. Պետրաշևսկին գրել է, թե Հոմերոսն անբարյացակամ է վերաբերվում դեպի դեմոկրատիան, դեպի ժողովրդի ստորին խավերը, որին նա պատկերել է «արհամարհված Թերսիդեսի» անձնավորության մեջ և որոշակի կերպով պաշտպանում է «աղնիվ պատրոկլեսներին»[15]։

Գաղափարական բարդ պրոբլեմի լուծմանը մոտենալով սոցիոլոգիական տեսանկյունից, հեղինակը, շնորհիվ լենինյան մտքերի ճիշտ ըմբռնման, ոչ միայն տուրք չէր տալիս գռեհիկ սոցիոլոգիզմին, այլև զգուշացնում էր նրանից։ Դեռևս 1908 թ. Սպանդարյանը գրական երևույթների մեկնաբանության հիմքում դնում էր լենինյան արտացոլման տեսությունը։ Իսկապես, չէ՞ որ Հոմերոսի՝ դեպի «դեմոսն» ունեցած վերաբերմունքով չէր որոշվում «Իլիականի» համամարդկային արժեքը, ոչ էլ Լև Տոլստոյի կրոնական հայացքներով՝ «Հարություն» վեպի գեղարվեստական հմայքը, այլ՝ ժամանակի իրականության մասին այն ճշմարտությամբ, որ արտացոլված էր այդ երկերում։ Բուրժուական գրողի ստեղծագործության մեջ ևս, եթե նա իրոք մեծ գրող է, չեն կարող չարտահայտվել իր դարաշրջանի կարևոր կողմերը, որը և դարձնում է նրա ստեղծագործությունը արժեքավոր և հետաքրքիր գալիք սերունդների համար։

1910 թ., Տոլստոյի մահվան օրերին ևս, բուրժուական մամուլի բարձրացրած նոր, ավելի մեծ աղմուկի և թմբկահարության մեջ դարձյալ ամենից բարձր հնչում էր Տոլստոյի ուսմունքի ռեակցիոն տարրերի գովերգությունը։

Հեղափոխության ալիքի բարձրացման ժամանակներում այդ երևույթը միայն բացասական ազդեցություն կարող էր ունենալ թե՛ բանվոր դասակարգի պայքարի, թե՛ աշխատավոր մասսաների կուլտուրական ու գեղարվեստական դաստիարակության վրա։ Պատահական չէ, որ այդ տարին երկու ամսվա ըն-

14 Սուրեն Սպանդարյան, Երկեր (երկու հատորով), հատ. 1, Երևան, 1959, էջ 196։
15 Նույն տեղում։

թացքում Լենինը գրեց Տոլստոյի մասին հինգ հոդված («Լ. Ն. Տոլստոյ», «Շրջադարձի սկիզբը չէ՞ արդյոք», «Լ. Ն. Տոլստոյը և նրա դարաշրջանը», «Տոլստոյը և պրոլետարիատի պայքարը», «Վերապահության հերոսները»)։ Այդ օրերին Տոլստոյի մասին հատուկ հոդվածներով հանդես եկավ նաև Գ. Վ. Պլեխանովը (1908 թ. նա գրել էր միայն մի փոքրիկ հոդված «Լ. Ն. Տոլստոյը և բնությունը» վերնագրով, որ նախատեսված էր հոբելյանական կոմիտեի ժողովածուի համար։ Սակայն այդ ժողովածուն լույս չտեսավ և հոդվածն այդ ժամանակ հրապարակ չեկավ, տպագրվեց միայն 1924 թ. «Звезда» ժուռնալի չորրորդ գրքում)։ 1910 թ. դեկտեմբեր և 1911 թ. հունվար-փետրվար ամիսներին բոլշևիկյան լեգալ մամուլում տպագրվեցին Պլեխանովի «Հրապարակախոսի դիտողություններ», «Այստեղից մինչև այստեղ», «Պատկերացումների շփոթ», «Կարլ Մարքսը և Լև Տոլստոյը», «Դարձյալ Տոլստոյի մասին» հոդվածները։

Պլեխանովի հոդվածները մեծ հետաքրքրություն էին ներկայացնում, որպես մարքսիստ-արվեստաբանի կողմից մասնագիտական մակարդակով կատարված վերլուծության օրինակներ։ Վիճելով Տոլստոյի մահվան առթիվ հանդես եկող մի շարք քննադատների, այդ թվում Homunculus կեղծ անունով հեղինակի հետ (դա նույն ինքը՝ հետագայում նշանավոր սովետական լրագրող, բազմաթիվ քաղաքական ֆելիետոնների հեղինակ Դավիդ Զասլավսկին էր), որն ասում էր, որ Ռուսաստանում մի մասը «պարզապես սիրում է Տոլստոյին, իսկ մյուս մասը՝ այստեղից մինչև այստեղ»,— Պլեխանովն իրեն համարում էր այս վերջինների մեջ։ Տոլստոյին առանց վերապահումների «պարզապես սիրում են» «բարձր դասակարգի գաղափարախոսները», որոնք «չունենալով լայն հասարակական շահեր, ձգտում են իրենց հոգեկան դատարկությունը լցնել զանազան կրոնական որոնումներով», իսկ «այստեղից մինչև այստեղ» Տոլստոյին սիրում են աշխատավորության «այն գիտակից ներկայացուցիչները», որոնք չեն բավարարվում քրիստոնեական բարոյականությամբ և որոնք «իրենց կյանքի իմաստի տանջալից որոնումների ոչ մի կարիք չունեն, քանի որ վաղուց արդեն «բերկրանքով» գտել են այն հասարակական մեծ նպատակին ուղղված շարժման մեջ»[16]։

Քաղվածքներ բերելով Տոլստոյի հրապարակախոսական զանազան գրքերից, Պլեխանովը քայլ առ քայլ, համբերատարությամբ բացում էր Տոլստոյի հակասությունները, ուսմունքի բացասական կողմերը, մասնավորապես «չարին բռնությամբ չհակառակելու» գաղափարի վնասակարությունը և հաստատում էր, որ ինչքան էլ Տոլստոյը «նոր կրոնի» ստեղծման մեջ ելնում էր մարդկության համար բարի նկատառումներից, նրա իդեալը «բացարձակապես ոչ մի ընդհանուր բան չուներ մեր ժամանակի առաջավոր գաղափարի հետ»[17]։ Հավերժականը ժամանակավորին, հոգեկանը մարմնականին հակադրելու նրա ձգտումները, որի վրա հիմնվում է Տոլստոյի ուսմունքը, վերջիվերջո հանգում են դիտակցությունը կեցությանը հակադրելուն և բերում են գործնականում «չարը» արդարացնելու, նրա գոյության հետ հաշտվելու, հետևապես և տիրող կարգերի, շահագործման, բռնությունների, կախաղանների հետ հաշտվելու գաղափարին։ Պլեխանովը բազմաթիվ նուրբ դիտողություններ էր անում այն մասին, թե ինչպես է առաջացել ու զարգացել Տոլստոյի կրոնական «շրջա-

16 Г. В. Плеханов. Искусство и литература, էջ 662։
17 Նույն տեղում, էջ 690։

դարձը», ինչ ներքին հոգեկան լարեր են գործել մեծ գրողի մեջ, մինչև նա հասել է «կատաղած շանն» անգամ չդիմադրելու քարոզին։

Սակայն Պլեխանովի հոդվածներն, այնուամենայնիվ, չէին բացահայտում Տոլստոյի ուսմունքի և հակասությունների հասարակական արմատներն այնպիսի խորությամբ և հստակությամբ, ինչպես այդ կատարեց Լենինն իր նշված հոդվածներում։ Լենինը Տոլստոյի ուսմունքի թուլությունը տեսնում էր ոչ միայն Տոլստոյ-գրողի սուբյեկտիվ-գաղափարական համոզմունքների, այլև օբյեկտիվ, գրողի անձնավորությունից դուրս գտնվող, բայց նրա հայացքների մեջ իրենց անդրադարձումը գտնող երևույթների, իրականության առանձնահատկությունների մեջ։ Տոլստայի հակասությունների հիմքում ընկած էին ռուսական առաջին հեղափոխության հակասությունները, ռուս բազմամիլիոն գյուղացիության հայացքների ուժեղ և թույլ կողմերը, մի բան, որի վրա Պլեխանովը կանգ էր առնում հարևանցիորեն, գրեթե աննկատելի։ 1910 թ. գրած հոդվածների մեջ ևս Լենինն առանձին ուժով շեշտում էր, որ Տոլստոյի, որպես գեղարվեստագետի, նշանակությունը հեղափոխության դարաշրջանն իր գլխավոր առանձնահատկություններով ճշմարտացի արտացոլելու մեջ է, մինչև անգամ նրա ուսմունքը՝ իր մեջ ռեակցիոն տարրեր ունենալով հանդերձ, որ արտահայտվել է նրա գեղարվեստական երկերում, դարձյալ բնորոշ է այդ ժամանակի սոցիալական ամենամեծաթիվ խավի՝ ճորտատիրությունից ազատագրված, բայց կապիտալի քայքայիչ, ատելի լծին դատապարտված և նրանից ազատվելու ելք չտեսնող գյուղացիության համար։

«Տոլստոյի երկերում արտահայտվեցին հատկապես գյուղացիական մասսայական շարժման թե՛ ուժը և թե՛ թուլությունը, թե՛ հզորությունը և թե՛ սահմանափակությունը։ Նրա բուռն, կրքոտ, հաճախ անխնա սուր բողոքն ընդդեմ պետության և ոստիկանական-կազյոնի եկեղեցու, արտահայտում է պրիմիտիվ գյուղացիության այն դեմոկրատիայի տրամադրությունը, որի մեջ դարավոր ճորտատիրական իրավունքը, չինովնիկական կամայականությունն ու կողոպուտը, եկեղեցական ճիզվիտությունը զայրույթի ու ատելության լեռներ են կուտակել»[18]։ Լենինը Տոլստոյի ուսմունքը դիտում է որպես «այն վերին աստիճանի բարդ, հակասական պայմանների, սոցիալական ազդեցությունների, պատմական տրադիցիաների արտացոլումը, որոնք որոշում էին ռուսական հասարակության տարբեր դասակարգերի ու տարբեր խավերի հոգեբանությունը հետռեֆորմյան, բայց նախահեղափոխական դարաշրջանում»[19]։

Տոլստոյին «պարզապես» և ամբողջությամբ, ինչպես նաև «այստեղից մինչև այստեղ» սիրողներից, գրողին մեծարելու մեջ սահմաններ չճանաչող բոլոր գրականագետներից, փիլիսոփաներից և հրապարակախոսներից ոչ մեկը չկարողացավ որոշել նրա ստեղծագործության նշանակությունը համաշխարհային գրականության մեջ։ Մինչդեռ Լենինն իր հակիրճ հոդվածներում ցույց տվեց, որ «Ճորտատերերի տրորած երկրներից մեկում հեղափոխության նախապատրաստման դարաշրջանը Տոլստոյի հանճարեղ լուսաբանության շնորհիվ հանդես եկավ որպես մի առաջընթաց քայլ ամբողջ մարդկության գեղարվեստական զարգացման մեջ»[20]։

---

18 Վ. Ի. Լենին, Հոդվածներ Տոլստոյի մասին, էջ 13—14։
19 Նույն տեղում, էջ 14։
20 Նույն տեղում, էջ 15։

Պլեխանովը, որքան էլ հանդամանորեն էր խոսում Տոլստոյի ուսմունքի անընդունելիության, վնասակարության մասին, նույնքան թերի և հպանցիկ դիտողություններ էր անում նրա ստեղծագործության, որպես համաշխարհային արժեքի և պրոլետարիատի համար անգնահատելի գեղարվեստական ժառանգության մասին։ Պլեխանովի վեճը զանազան քննադատների և հենց Տոլստոյի հետ չուներ այն անդիջում, մերկացնող բնույթը, ինչ կար Լենինի հոդվածներում։ Լենինն ասում էր, որ լիբերալ թերթերն իրենց «օձիքն աղատում են» «այն սնամեջ, կազյոննի-լիբերալ, մաշված-պրոֆեսորական ֆրազներով՝ «քաղաքակիրթ մարդկության ձայնի» մասին, «աշխարհի միահամուռ արձագանքի» մասին, «արդարության, բարության դաղափարների» մասին և այլն, որոնց համար այնպես խարազանում էր Տոլստոյը—և իրավացի էր խարազանում—բուրժուական գիտությունը»[21]։ Լիբերալները լռում են Տոլստոյի մերկացումների, նրա անսքող քննադատության մասին, որովհետև «Տոլստոյի քննադատականի մեջ յուրաքանչյուր դրույթ մի ապտակ է բուրժուական լիբերալիզմին»[22]։

Քննադատելով Տոլստոյի ուսմունքը, Պլեխանովը դրա տարրերը տեսնում էր Տոլստոյի այն գործերում, որոնք նախորդել էին «կրոնական շրջանին», և նրա գլուխ-գործոցներում նկատում էր արիստոկրատիայի, շահագործող դասերի արդարացման, պաշտպանության տրամադրություններ։ Գեղարվեստական գործերից քաղված առանձին հատվածների վերլուծությամբ Պլեխանովն անում էր նույնիսկ այնպիսի եզրակացություն, թե սխալ կլինի կարծել, որ Տոլստոյի հակասությունները արդյունք են կալվածատիրական դասակարգին, արիստոկրատիային տրված արտոնությունների անիրավացիության «աղոտ դիտակցության»։ «Այդ ժամանակ Տոլստոյը շահագործվողներին նայում էր այնպիսի անտարբեր աչքերով, ինչպես նայում են պատին»[23]։ Պլեխանովը պնդում էր, թե Տոլստոյի համակրանքը ժողովրդի հանդեպ պայմանավորված էր ոչ թե նրանով, որ ժողովուրդն ապրում է իր սեփական աշխատանքով, այլ նրանով, որ այդ աշխատանքը «լուսավորված է կրոնական հավատով»։

Տոլստոյի ժողովրդասիրության մասին այսպիսի հայացքը, պարունակելով ճշմարտության տարրեր, սողանցք էր թողնում գռեհիկ սոցիոլոգիական դատողությունների համար։

Լենինի մոտեցումը Տոլստոյի ժողովրդասիրության հարցին սկզբունքորեն այլ էր։ Լենինը Տոլստոյին համարում էր «իսկական մուժիկ գրականության մեջ», մեծ գեղարվեստագետ, որը ոչ թե ինչ-որ մանրամասների մեջ, այլ իր ամբողջ արվեստով, նաև ուսմունքով հանդիսանում էր ռուս գյուղացիության դաղափարների և բնավորության արտահայտիչը, նրա թե՛ ուժեղ և թե՛ թույլ կողմերի կրողը և գեղարվեստորեն մարմնավորողը։ Տոլստոյն իր ժողովրդասիրության մեջ այնքան հետևողական էր, որ ծագումով ու դաստիարակությամբ պատկանելով «Ռուսաստանի կալվածատիրական ավագանուն», «խզեց իր կապերն այդ միջավայրի բոլոր սովորական հայացքների հետ և իր վերջին դրվածքներում կրքոտ քննադատությամբ հարձակվեց ժամանակակից բոլոր պետական, եկեղեցական, հասարակական-տնտեսական կարգերի վրա, որոնք

21 Նույն տեղում, էջ 16։
22 Նույն տեղում, էջ 11—12։
23 Г. В. Плеханов, նշվ. աշխ., էջ 720։

հիմնված էին մասսաների ստրկացման, նրանց աղքատության, գյուղացիների և առհասարակ մանր տնտեսատերերի քայքայման, բռնության և կեղծավորության վրա, որոնցով վերից վար համակված է ամբողջ ժամանակակից կյանքը»[24]։

Լենինը բարձր գնահատեց Տոլստոյի ստեղծագործության նշանակությունը պրոլետարիատի և ամբողջ ռուս ժողովրդի պայքարի համար։

«Ուսումնասիրելով Լև Տոլստոյի գեղարվեստական երկերը, ռուսական բանվոր դասակարգը ավելի լավ կճանաչի իր թշնամիներին, իսկ ըմբռնելով Տոլստոյի ուսմունքը, ամբողջ ռուս ժողովուրդը պետք է որ հասկանա, թե ինչն էր իր սեփական թուլությունը, որը թույլ չտվեց նրան մինչև վերջը հասցնելու իր ազատության գործը»[25]։

Տոլստոյի մասին Լենինի գրած բոլոր հոդվածների մեջ հետևողականորեն անցնում էր նույն գիծը՝ գրողի ստեղծագործության մեջ կա գալիքին անցնող, ժողովրդին պիտանի բովանդակություն, նա չի մնում անցյալին։ Անխնա քննադատելով և մերժելով նրա ուսմունքը, բնորոշելով այն որպես «անվերապահորեն ուտոպիական» և իր «բովանդակությամբ ռեակցիոն»[26], Լենինը միաժամանակ շեշտում էր, որ թեև անցյալի գիրկն անցավ նախահեղափոխական Ռուսաստանը, որի պատկերողը հանդիսացավ Տոլստոյը, «բայց նրա ժառանգության մեջ կա այն, ինչ չի ընկել անցյալի գիրկը, ինչ պատկանում է ապագային։ Այդ ժառանգությունը վերցնում և այդ ժառանգության վրա աշխատում է ռուսաստանյան պրոլետարիատը»[27]։

Լենինի հոդվածները Տոլստոյի մասին տոգորված էին այն նույն ոգով, որով և նրա ամբողջ աշխարհայացքը որպես բանվոր դասակարգի և աշխատավոր մասսաների առաջնորդ՝ կուսակցականությամբ։ Երևույթների գնահատման այն բազմակողմանիությունն ու խորությունը, արտահայտվելու այն կրքոտությունն ու տրամաբանության ուժը, որ հատուկ էր Լենինին, արդյունք էր նրա կուսակցական վերաբերմունքի՝ աշխատավոր մարդկության շահերի բարձր գիտակցության և դրանք պաշտպանելու անկոտրում հետևողականության։ Ոչ թե արձանագրելով, այլ մեկնաբանելով Տոլստոյի հակասությունները իրենց ամբողջ բարդության մեջ, Լենինը միշտ ելնում էր այն խնդրից, թե այդ ստեղծագործությունը որչափով է կապված կյանքի վերափոխության համար աշխատավոր մարդկության պայքարի հետ։

Տոլստոյի ստեղծագործության և ուսմունքի մեկնաբանության հենց այս գիծն էր, որ առանձին ուժով արտահայտվեց Տոլստոյի մասին հայ բոլշևիկների ելույթների մեջ։

1910 թ. Տոլստոյի մասին լենինյան ոգով գրված ընդարձակ հոդվածով հանդես եկավ Ստեփան Շահումյանը։ Դա «Ընթերցողի տարակուսանքը» հոդվածն էր, որ լույս տեսավ «Баку» թերթում (դեկտ. 5), «Ընթերցող» ստորագրությամբ։ Վերնագրի տակ Շահումյանը նշում էր, որ դա նամակ է խմբագրությանը՝ Լ. Ն. Տոլստոյի հիշատակը մեծարելու առթիվ։

Հոդվածի առաջին մասում նա խոսում էր այն աղմուկի մասին, որ բարձրացված էր կովկասյան բուրժուական մամուլում Տոլստոյի մահվան շուրջը։

24 Վ. Ի. Լենին, Հոդվածներ Տոլստոյի մասին, էջ 23։
25 Նույն տեղում, էջ 27։
26 Նույն տեղում, էջ 40։
27 Նույն տեղում, էջ 16—17։

«Իր վշտի զգացումներն արտահայտելու մեջ մյուսներից ետ չմնաց նաև մեր քաղաքը,— հեգնանքով ակնարկում էր Շահումյանը, նկատի ունենալով, որ Բաքվի լիբերալ-բուրժուական և կադետական մամուլը կրկնում էր Ռուսաստանի մայրաքաղաքների գաղափարակիցներին։— Թե՛ մեր լրագրերը, թե՛ մեր գրական-գեղարվեստական խմբակը, թե՛ քաղաքային գուման, թե՛ ամբողջ ազգաբնակչությունը, սկսած խոշոր կապիտալիստ Զ. Թաղիևից, որը հեռագիր ուղարկեց հանգուցյալի այրուն, և վերջացրած բանվորների մի քանի խմբերով, բոլորն էլ արձագանքեցին այդ իրադարձությանը։ Եվ նորից՝ բոլորն ի դեմս Տոլստոյի ողբում են ոչ միայն և նույնիսկ ոչ այնքան մեծ գրողին, գեղագետին և այլն, որքան մեծ մտածողին և կյանքի ուսուցչին»[28]։

Ինչպես Լենինն իր հոդվածներում, Շահումյանն ամենից առաջ քննադատում էր բուրժուական լրագրողներին և գրականագետերին՝ Տոլստոյի ուսմունքն իր բոլոր ռեակցիոն կողմերով փառաբանելու, ինքնակատարելագործման նրա տեսությունը դրվատելու և դրան հետևելու կեղծ կոչերի համար։ Ջերմորեն նշելով Տոլստոյի ստեղծագործության «աղնվացնող և վսեմացնող ազդեցությունը» միլիոնավոր մարդկանց» վրա, Շահումյանը միաժամանակ ընդգծում էր նրա աշխարհայացքի հակասությունները. մի կողմից «տառապած հոգի», որը սպանությունների և կամայականությունների սանձազերծման պատկերներից սարսռած աշխարհով մեկ աղաղակեց՝ «Ջեմ կարող լռել», իսկ մյուս կողմից՝ մի կրոնախև, որը խորհուրդ էր տալիս «լինել աղքատ, լինել մուրացկան, լինել շրջմոլիկ», որովհետև միայն այդ դեպքում կարելի էր «մտնել աստծո արքայություն», ինչպես նաև «երջանիկ լինել այստեղ, երկրի վրա»։ Թաղիևները և բոլոր նրա նման ցավակցողները մտքով անգամ չեն անցկացնում հետևելու Տոլստոյի՝ «սեփականությունից հրաժարվելու», «շրջմոլիկ դառնալու» խորհուրդներին։ Ընդհակառակը, նրանք հրի ու սրի են մատնում սեփականության վրա ձեռք բարձրացնողներին, նրանք չորս տարվա տաժանակիր աշխատանքի քշելու օրենք սահմանեցին շրջմոլիկության համար։ Ուրեմն ինչո՞վ բացատրել, որ հենց նրանք էլ Տոլստոյին հայտարարում են «մեծ մտածող», «կյանքի ուսուցիչ»։ Շահումյանը գրում էր, որ ինքը լի է խորին հարգանքով դեպի հանգուցյալի հիշատակը, բայց նրան որպես «կյանքի ուսուցիչ» մեծարելու երևույթը «առաջացրել է և առաջացնում է մեծ տարակուսանք»[29]։ Շեշտելով Տոլստոյի, որպես «հանճարեղ գեղագետի», «մարդկային հոգին ճանաչողի», «Պատերազմ և խաղաղություն», «Աննա Կարենինա» անզուգական գործերի ստեղծողի դերը մարդկության գեղարվեստական զարգացման մեջ, Շահումյանն ավելացնում էր, որ նրան որպես կյանքի ուսուցիչ մեծարողները ոչ միայն ոչինչ չէին սովորում նրանից, այլև կատարում էին նրա ուսմունքի ճիշտ հակառակը։ «Մի՞թե այդ բոլոր բժիշկները, փաստաբանները, վաճառականները, լրագրերի խմբագիրներն ու հրատարակիչները և այլն, բոլոր նրանք, ովքեր ընդունում են,— և այն էլ ոչ թե ահից, այլ խղճի մտոք,— թե՛ պետական իշխանությունը, որ Տոլստոյը ժխտում էր, թե՛ զինվորագրությունը, որ Տոլստոյը մերժում էր, կարող են Տոլստոյի ուսմունքով ապրել կյանքում։ Նրանք ամեն օր միլիոնավոր շուրթերով երդվում են ու դատում իրենց դատարաններում, հանցագործներին բանտերն են նե-

28 Ս տ. Շ ա հ ու մ յ ա ն, Գրականության մասին, Երևան, 1948, էջ 40։
29 Նույն տեղում։

տում,— մի՞թե նրանք անկեղծ են, երբ ողբում են «կյանքի մեծ ուսուցչի», «սիրո ուսուցչի» մահը»[30]։ Բնորոշելով Տոլստոյին որպես «արդի հասարակական-քաղաքական և հատկապես եկեղեցական կեղծիքի խոշորագույն թշնամի և մերկացնող, որպես գեղարվեստագետ, որն ատում էր բռնատիրությունը, Շահումյանը Լենինի ու Պլեխանովի նման հաստատում էր, որ չնայած այդ ամենին, նա չի կարող լինել բանվոր դասակարգի և աշխատավոր ժողովրդի «կյանքի ուսուցիչը»։ «Սիրեցեք Տոլստոյին, բայց ճշմարտությունն ավելի սիրեցեք»,— կոչ էր անում կովկասյան բոլշևիկների ղեկավարը։

Տպագրելով Շահումյանի նամակը, «Баку» թերթի խմբագրությունն իր կողմից հաղորդել էր, որ մոտակա համարներից մեկում պատասխան է տպագրելու «Ընթերցողին»։ Այդ խոստացված պատասխանն իրոք հրապարակ եկավ «Տոլստոյը պ. Ընթերցողի դատաստանի առաջ» վերնագրով։ Նրա հեղինակը թերթի խմբագիր, ազգությամբ հայ Խրիստաֆոր Վերմիշևն էր (Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո աշխատեց սովետական օրգաններում, եղավ Երևանի պետական համալսարանի դասախոս)։ Հոդվածը խիստ առարկություններ չէր պարունակում, բարեկամաբար էր տրամադրված դեպի Ընթերցողը, սակայն նրա կրկնվող դատողությունների իմաստն այն էր, որ եթե Տոլստոյը որպես գեղագետ կարողանում է ազդել մարդկանց վրա, կարողանում է մերկացումներ անել, ապա իրավունք է ստանում կոչվելու կյանքի ուսուցիչ։ Այն ենթադրվող առարկությանը, թե տարբեր են Տոլստոյի գեղարվեստական մերկացումների և կրոնական ուսմունքի ազդեցությունները, Տոլստոյի ստեղծագործական մեթոդի և ուսմունքի միջև կա աղաղակող հակասություն, որոնք նույնացնել չի կարելի՝ Վերմիշևը տալիս էր միշտ միևնույն պատասխանը։ Հոդվածագիրը մինչև անգամ այն կարծիքին էր, թե իր և Շահումյանի տեսակետները միևնույն ելակետն ունեն, թե ինքը և Ընթերցողը այս հարցում կարող են հեշտությամբ համաձայնության գալ։ Վերմիշևը մի կողմ էր թողնում այն հարցը, թե ինչու ամբողջ բուրժուական մամուլը մեծարում է Տոլստոյին ոչ թե որպես գեղագետի, այլ որպես նոր կրոնական ուսմունք ստեղծողի, որպես «մտածողի»։ Վերմիշևը պատասխան չտվեց Ընթերցողի հիմնական «տարակուսանքին»[31]։

Տոլստոյի մասին մի այլ հոդվածով Շահումյանը հանդես եկավ բոլշևիկյան «Современная жизнь» շաբաթաթերթում, 1911 թ., երբ դեռ շարունակվում էին վեճերը Տոլստոյի ստեղծագործության և ուսմունքի շուրջը։ Այդ պարբերականում տպագրվեց Լենինի «Марксизм и «Наша заря» վերնագրով հոդվածը։ Լենինի աշխատակցությունը կազմակերպել էր Շահումյանը, մի հանգամանք, որ ապացուցում էր նրանց փոխադարձ հարգանքն ու վստահությունը։ Շահումյանի հոդվածը՝ «Մի քանի խոսք Լ. Ն. Տոլստոյի կրոնի մասին», ցույց է տալիս, որ նրա հեղինակը լավ ծանոթ էր Լենինի և Պլեխանովի մտքերին Տոլստոյի կրոնականության բնույթի վերաբերյալ։ Լենինի և Պլեխանովի հոդվածներում շոշափվում էր Տոլստոյի, որպես գեղագետի և մտածողի, այն առանձնահատուկ հակասությունը, որ թեև Տոլստոյը դարձել էր «կրոնախև», հնարել էր նոր կրոն, բայց ներքուստ կրոնական չէր, նրա մեջ չէր հաղթահարված կենսասիրությունը, միանգամայն երկրային, ռեալ կյանքի նկատմամբ

30 Սույն տեղում։
31 Վերմիշևի հոդվածը տե՛ս «Баку», 1910, 12 դեկտեմբերի։

սերը և այդ կյանքով լիարժեք ապրելու տենչը։ Պլեխանովի հոդվածներից մեկում («Смешение представлений») կա այսպիսի դիտողություն. Տոլստոյը շարունակ ինքն իրեն մեղադրում էր, որ անձամբ չէր անում այն, ինչ քարոզում էր, ինչ անհրաժեշտ էր համարում, որ կատարեն մարդիկ։ Նա կուրծք էր ծեծում, որ չի կարողանում կիրառել իր սեփական պատվիրանները։ Նա ամենախիստ ողբերգություն էր ապրում այս փաստի գիտակցությունից։ Բայց,— ավելացնում էր Պլեխանովը,— այդ ճանապարհը տանում էր դեպի քվեիտիզմի մեռած աշխարհը, իսկ Տոլստոյը չափազանց կենդանի մարդ էր. որպեսզի կարողանար լավ զգալ իրեն այդպիսի աշխարհում։ «Նա ետ էր նետվում այնտեղից»[32]։ Հետաքրքրական է, որ կարդալով Պլեխանովի հիշյալ հոդվածը, Լենինը ընդգծել է այդ վերջին բառերը՝ «Он рвался из нее назад»։ Հայտնի է, որ Գորկու հետ ունեցած զրույցների ժամանակ Լենինը Տոլստոյին բնութագրել է որպես «հսկա մարդ», «կոճղ», բնորոշումներ, որ բովանդակում են նաև կենսասեր, երկրային մարդ լինելու հասկացողությունը։

Շահումյանն իր երկրորդ հոդվածում առաջ էր քաշում այն հարցը, թե քանի որ ինքը՝ Տոլստոյը, հավատում էր իր հնարած կրոնին, քանի որ այդ հնարքը տեղի ունեցավ բնական ճանապարհով, չունի՞ արդյոք նրա կրոնը «գիտակցական», «մտացածին» կողմ։ Այսինքն չէ՞ր ստեղծվել արդյոք այդ կրոնը հատուկ դիտավորությամբ, նպատակով։ Շահումյանին խիստ հետաքրքրում է, թե մեծ «աստվածորոնողը» «սուբյեկտիվորեն, իր գիտակցության խորքում, ինչպես էր նայում կրոնի վրա» ... Եվ ահա նա գալիս է այն եզրակացության, որ Տոլստոյը ոչ թե հայտնություն է արել, 55 տարեկան հասակում ժխտողից դարձել է հավատացյալ, այլ հենց սկզբից, դեռ պատանի ժամանակից գիտակցաբար, բանականության ուժով աշխատել է կրոն հնարել՝ կյանքի հակասությունները լուծելու, «մարդկանց մեջ եղած ամբողջ չարությունը ոչնչացնելու» և նրանց «մեծ բարիք» տալու մարդասիրական մտադրությամբ։ Այլ կերպ ասած նա ոչ թե իրոք հավատացել է, կրոնական է դարձել աստծու կամքով, այլ հնարել է այդ կրոնը։ Մեջբերում անելով Տոլստոյի «Մանկություն» վեպից, Շահումյանն ասում է. ինչպես Տոլստոյի եղբայրը՝ Նիկոլենկան, «իր աշխույժ երևակայության և դեպի մարդիկ, դեպի բարությունն ունեցած սիրո մեջ հնարել է» զանազան պատմություններ և դրանք գրել «կանաչ փայտիկի» վրա, որոնցով «ինքն էլ ուրախանում էր և խաբում մեզ դրանցով», այնպես էլ «իր աշխույժ երևակայությամբ, դեպի մարդիկ ունեցած իր սիրով, իր անսահման բարությամբ Տոլստոյը հնարել է իր կրոնը և ինքն ուրախանում էր դրանով և մեզ խաբում»[33]։ Բայց դրանից բանի էությունը չէր փոխվում։ Կրոնը մնում էր կրոն։ Շահումյանը վկայակոչում է Մարքսին, որ կրոնն անվանել է «աֆիոն ժողովրդի համար»։ Իր այս հոդվածի համար Շահումյանը բնաբան էր ընտրել Մարքսի հետևյալ խոսքերը. «Պայքարը ժողովրդի խաբուսիկ երջանկության դեմ՝ պայքար է հանուն նրա իրական երջանկության», դրանով ընդգծելով Տոլստոյի ուսմունքի վնասակարությունը և դրա ճիշտ մեկնաբանության անհրաժեշտությունը։ Անդրադառնալով Տոլստոյի կողմից կրոն ստեղծելու սուբյեկտիվ կողմին և կյանքի վերջում դրանից առաջ եկած ողբերգությանը, Շահումյանը կրկին անգամ հաստատում է. «Տոլստոյն ինքը,

32 Г. В. Плеханов, նշվ. աշխ., էջ 674։
33 Ստ. Շահումյան, նշվ. աշխ., էջ 101։

մեր կարծիքով, իր հոգու խորքում հավատացող մարդ չի եղել։ Սրա մեջ, գուցե արդեն մանկությունից եղել է անորոշ կրոնական զգացմունք. գուցե նա երբեք էլ բառիս լրիվ իմաստով «նիհիլիստ» չի եղել, բայց և կատարյալ հավատ դեպի այն կրոնը, որ նա այդպես կրքոտ կերպով և այդպիսի հափշտակությամբ քարոզում էր, նա չի ունեցել»[34]։

Շահումյանն իրավացիորեն չէր հավատում Տոլստոյի հավաստիացումներին, չէր հավատում, որ նա աստծուն ճանաչելով դարձել է «աշխարհիս ամենաերջանիկ մարդը»։ «Տոլստոյը խորապես դժբախտ էր». ասում է նա, և դրա պատճառը ոչ թե նրա ընտանիքն էր, անհամաձայնությունները նրա հետ, այլ ներքին թերահավատությունը հենց իր հայտնաբերած կրոնի հանդեպ։ Նա ինքը չէր հավատում, բայց ճգնում էր հավատալ և ուրիշներին հավատացնել, նա հնարում էր երջանիկ լինելու համար, բայց չէր հավատում հնարածին և դրա համար դժբախտ էր։

Տոլստոյի կրոնական ուսմունքի այսպիսի մեկնաբանությունը հանդիսանում էր գրողի հայացքների, հակասությունների բացահայտման լենինյան սկզբունքների կիրառման օրինակ։

Սուրեն Սպանդարյանը և Ստեփան Շահումյանը Լենինի աշակերտներն էին նաև մարքսիստական գեղագիտության հարցերում։ Դրա շնորհիվ նրանց հոդվածները Լև Տոլստոյի մասին ասացին ճշմարտությունը Կովկասի աշխատավորությանը, օգնեցին հասկանալու մեծագույն գրողներից մեկի ստեղծագործությունը։

---

34 Նույն տեղում, էջ 102։